

Կոտայքի մարզի բնակչության թվաքանակը 2019թ. հունվարի 1-ի դրությամբ կազմել է 250500 մարդ, որը հանրապետության ողջ բնակչության 8.4%-ն է, որից՝ 136700-ը քաղաքայիններ են (54.6%), 113800-ը՝ գյուղայիններ (45.4%):

2018թ. ընթացքում մարզի արտադրական ձեռնարկությունների կողմից թողարկվել է 193.9 մլրդ. դրամի արտադրանք՝ նախորդ տարվա 159.6 մլրդ. դրամի դիմաց կամ ծավալներն ավելացել են 21.5%-ով: Արդյունաբերական արտադրանքի ծավալների ավելացումը պայմանավորված է նախորդ տարվա համեմատ էլեկտրաէներգիայի արտադրության, մշակող արդյունաբերության և հանքագործական արդյունաբերության ցուցանիշների ավելացմամբ: Այսպես, 2018թ. էլեկտրաէներգիայի արտադրության ծավալը կազմել է 74.9 մլրդ. դրամ, ինչը նախորդ տարվա համեմատ ավել է 17.7 մլրդ. դրամով կամ 30.9%-ով: Հաշվետու ժամանակահատվածում մշակող արդյունաբերության արտադրանքի ծավալը կազմել է 114.7 մլրդ. դրամ, ինչը նախորդ տարվա համեմատ ավել է 16.4 մլրդ. դրամով կամ աճը կազմել է 16.7%: Ընդ որում աճ գրանցվել է հիմնականում սննդամթերքի (11.2%), խմիչքների (1.0%), այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների (53.4%) արտադրության ճյուղերում: Հանքագործական արդյունաբերության ոլորտում արտադրության ծավալները նախորդ տարվա համեմատ ավելացել են 550.1 մլն. դրամի չափով (աճը կազմել է 19.7%) կամ արտադրվել է 3.3 մլրդ. դրամի արտադրանք:

Արդյունաբերական արտադրանքի իրացման ծավալները հաշվետու ժամանակահատվածում ավելացել են 20.7%-ով կամ իրացվել է 192.5 մլրդ. դրամի արտադրանք՝ նախորդ տարվա 159.5 մլրդ. դրամի դիմաց:

2018թ. արտադրանքի իրացումը ներքին շուկայում կազմել է 124.2 մլրդ. դրամ, իսկ արտաքին շուկայում՝ 68.3 մլրդ. դրամ, այդ թվում՝ ԱՊՀ երկրներ արտահանվել է 26.1 մլրդ. դրամի և այլ երկրներ՝ 42.2 մլրդ. դրամի արտադրանք: Հաշվետու ժամանակահատվածում արտադրանքի արտահանման ծավալները նախորդ տարվա համեմատ աճել են 55.9%-ով:

Մանրածախ առևտրի շրջանառության ծավալը հաշվետու ժամանակահատվածում կազմել է 62.8 մլրդ. դրամ, որը նախորդ տարվա համեմատ ավել է 773.2 մլն. դրամով կամ 4.7%-ով:

Իսկ բնակչությանը մատուցած ծառայությունների գումարը կազմել է 119.4 մլրդ. դրամ, որը նախորդ տարվա համեմատ ավել է 14.2 մլրդ. դրամով կամ աճը կազմել է 13.5%:

2018թ. գյուղատնտեսական համախառն արտադրանքի ծավալը կազմել է 73.0 մլրդ. դրամ նախորդ տարվա 73.2 մլրդ. դրամի դիմաց:

Հաշվետու ժամանակահատվածում մարզում կատարվել են 24.2 մլրդ. դրամի կապիտալ ներդրումներ, որը նախորդ տարվա համեմատ ավել է 16.4%-ով: